ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

03.09.2021թ. թվականին կնքված N ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/110-1 գնման պայմանագրի

ք. Երևան «01» 10 2021թ.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրենի ժ/պ՝ Գ. Ավետիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Էյչ վի էյ սի սերվիս» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ն. Աղազարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 03.09.2021թ. կնքված N ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/110-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1, 8.5 և 8.8 կետերը և հաշվի առնելով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման պահանջը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1. Պայմանագրի Հավելված 1-ով 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով սահմանված մատակարարման ժամկետները խմբագրել և ներկայացնել հետևյալ շարադասությամբ՝ «Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հետո 60 օրացուցային օրվա ընթացքում»:

## 2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ԳՆՈՐԴ**
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930000358920100
ՀՎՀՀ 00000911

տնօրենի ժ/պ ________ Գ. Ավետիսյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«Էյչ վի էյ սի սերվիս» ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ, գ. Սուրենավան, Արցախի 15տ
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052822069731001
ՀՎՀՀ 04230785

տնօրեն ________ Ն. Աղազարյան
/ստորագրություն/
Կ.Տ